ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

8 օգոստոսի 2012թ. թիվ 368

Ս. ՎԱՐՈՍՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՄԻ ՄԱՍԸ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 163 հոդվածի, ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.17 կետի «ա» ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 22-ի N 1838-Ն որոշումը և հաշվի առնելով Ս.Վարոսյանի դիմումը՝

Կ ա ր գ ա դ ր ու մ եմ.

1. «Թումանյանի առողջության կենտրոն» ՊՓԲԸ-ի տնօրեն Ստեփան Վարոսյանին տրամադրել 2012 թվականի աշխատանքային տարվա ամենամյա արձակուրդի մի մասը ս/թ օգոստոսի 14-ից 24-ը ներառյալ՝ 10 աշխատանքային օր:

2. Ս.Վարոսյանի արձակուրդում գտնվելու ժամանակ «Թումանյանի առողջության կենտրոն» ՊՓԲԸ-ի տնօրենի պարտականությունների կատարումը դնել «Վահագնի Մ.Քոչինյանի անվան առողջության կենտրոն» ՊՓԲԸ-ի տնօրեն Աշոտ Հակոբյանի վրա:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2012թ. օգոստոսի 8
ք.Վանաձոր